ՎԻՔԻՊԵԴԻԱ. ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուսումնասիրել զարգացումների ընթացքը և գնահատել հոդվածների որակը

wikipedia.org

Վիքիպեդիան երբևէ ստեղծված ամենամեծ հանրագիտարանն է

Այն հասանելի է հարյուրավոր լեզուներով: Սակայն, ի տարբերություն ավանդական հանրագիտարանների, Վիքիպեդիան ունի խմբագրման բաց մոդել: Ցանկացած մարդ կարող է ներդրում ունենալ՝ հոդվածներ գրելով կամ խմբագրելով, ինչը նշանակում է, որ հոդվածները կարող են տարբերվել իրենց որակով: Ընթերցողների համար շատ կարևոր է տարբերել՝ լավն է հոդվածը, թե՞ ոչ:



Ի՞նչ է Վիքիպեդիան

Վիքիպեդիան սկզբնաղբյուր չէ, ինչպես, ասենք, օրաթերթում տպված հարցազրույցը: Այն նաև երկրորդային աղբյուր չէ, ինչպես գիտական պարբերականում տպված հոդվածը կամ լրատվական վերլուծականը: Վիքիպեդիան հանրագիտարան է՝ սկզբնաղբյուրներից և երկրորդային աղբյուրներից հավաքագրված տեղեկությունների ամբողջություն՝ ամփոփված հոդվածների մեջ, որոնք թեմայի վերաբերյալ ընդհանուր պատկերացում են տալիս: Վիքիպեդիան, ինչպես մյուս հանրագիտարանները, պետք է օգտագործվի որպես մեկնակետ: Այն կարող է ներկայացնել նյութի վերաբերյալ ընդարձակ ակնարկ և օգնել բարձրորակ սկզբնաղբյուրներ և երկրորդային աղբյուրներ գտնել:

Վիքիպեդիան կարող է քեզ օգնել
- ստանալ նյութի մասին ընդհանուր պատկերացում,
- ստանալ նյութին վերաբերող գրականության ցանկ,
- բացահայտել թեմային առնչվող հարակից նյութեր:

Ինչպե՞ս են ստեղծվում Վիքիպեդիայի հոդվածները

Սովորաբար Վիքիպեդիայի հոդվածը միանգամից չի ստեղծվում: Հոդվածները հետզհետե ընդլայնվում են, խմբագրվում և վերախմբագրվում՝ հաճախ տարբեր հեղինակների համատեղ աշխատանքի և համագործակցության միջոցով: Մի խմբագիրը կարող է սկսել հոդվածը, մեկ ուրիշն՝ ընդլայնել այն, իսկ երրորդը՝ վերախմբագրել, ավելի ընթեռնելի կամ հասկանալի դարձնել: Ստեղծված հոդվածը ոչ մեկին չի «պատկանում», փոխարենը կա մտահոգ մարդկանց մի խումբ, որը հոդվածի ստեղծման գործում ներդրում է ունեցել և հետևում է հոդվածի զարգացմանը:

Հետևել Վիքիպեդիայի հոդվածի զարգացումը



Դու կարող ես հետևել, թե ինչպես է որևէ հոդված զարգացել՝ սեղմելով վերևի անկյունում գտնվող Դիտել պատմությունը հղումը: Հոդվածի նախկին բոլոր տարբերակները կգտնես այստեղ:

Դիտել պատմությունը էջում յուրաքանչյուր տող ներկայացնում է հոդվածի մեկ տարբերակ: Կարող ես սեղմել ամսաթվի վրա և տեսնել տվյալ պահին պահպանված տարբերակը: Յուրաքանչյուր խմբագրման կողքին նշված է խմբագրման հեղինակի անունը:



Դու կարող ես նաև համեմատել հոդվածի երկու տարբերակները՝ նշելով տողերից երկուսը և այնուհետև սեղմելով «համեմատել ընտրած տարբերակները»: Արդյունքում դու կտեսնես երկու սյունակ՝ ձախ սյունակում կերևա նախորդ տարբերակը, իսկ աջում՝ կատարված խմբագրումը: Կատարված բոլոր փոփոխություններն ընդգծված են մուգ: Այս ֆունկցիան կարող ես օգտագործել որոշելու՝ ինչ փոփոխությունների է ենթարկվել հոդվածը երկու տարբերակների



Նախորդ տարբերակ

Ներկա տարբերակ

Ինչպե՞ս են մասնակիցները բարելավում Վիքիպեդիան

Շատերը կարծում են, որ Վիքիպեդիան միայն հոդվածների հանրագիտարան է, սակայն «հետնաբեմում» նույնպես մեծ աշխատանք է տարվում: Վիքիպեդիայում կատարվող խմբագրումների մոտ կեսը արվում են հոդվածներից դուրս: Օրինակ՝մասնակիցները քննարկում են, թե ինչպես պետք է զարգանա հոդվածը, գնահատում են աղբյուրների որակը և սահմանում խմբագրման կանոնակարգեր: Այս էջերը և քննարկումները հոդվածների նման բաց և հասանելի են բոլորի համար, եթե գիտես՝ որտեղ դրանք գտնել:



Յուրաքանչյուր հոդված ունի իր «քննարկում» բաժինը: Հոդվածի վերևի աջ անկյունում կա «քննարկում» կոճակը: Սեղմելով այս կոճակը՝ կարող ես տեսնել, թե ինչ քննարկումներ են ծավալվել հոդվածի բովանդակության շուրջ: Միգուցե որևէ խնդիր, որի մասին դու ցանկանում ես բարձրաձայնել, արդեն քննարկվել է: Եթե կասկածներ ունես հոդվածի որևէ հատվածի վերաբերյալ, բայց ինքդ չես կարող այն ուղղել, կարող ես գրել հոդվածի քննարկման էջում:



Շատ հարցեր պատասխան են ստանում մի քանի օրվա ընթացքում, բայց եթե քո հարցը ուշադրության չի արժանանում մեկ շաբաթվա ընթացքում, ապա լավ կլինի հարցն ուղղել անմիջապես հոդվածի այդ հատվածի հեղինակին կամ դիմել ընդհանուր քննարկման՝ որևէ էջում: Սեղմիր «դիտել պատմությունը» կոճակը և գտիր հոդվածում տվյալ խմբագրումները կատարած մասնակցին, այնուհետև սեղմիր "քննարկում" հղման վրա, որը կուղղորդի քեզ նրա անձնական քննարկման էջ, որտեղ և կարող ես հարցեր ուղղել հենց այդ մասնակցին:

Հոդվածի որակի գնահատում

«Լավ» և «ընտրյալ» հոդվածների նշանները

Վիքիպեդիայի հոդվածներն իրենց որակով զգալիորեն տարբերվում են. շատերը հոյակապ որակ ունեն են, որոշները շատ մակերեսային են և անհարկի խրթին, մյուսները կողմնակալ են կամ պարունակում են հնացած տեղեկություններ: Հայերեն Վիքիպեդիայում կան լավագույն հոդվածներն առանձնացելու հատուկ ընթացակարգեր. այդպիսի հոդվածները լինում են «լավ հոդվածներ» կամ «ընտրյալ հոդվածներ», սակայն ոչ բոլոր հոդվածներն են, որոնք ունեն բավարար որակ և ընդգրկված են այդ անվանակարգերում:

Այդ դեպքում, ինչպե՞ս կարելի է արագ գնահատել հոդվածի ընդհանուր որակը: Կա երկու հիմնական եղանակ.

- ստուգել՝ առկա՞ են որակյալ հոդվածի հատկանիշները,
- փնտրել՝ առկա՞ են վատ որակին բնորոշ ընդհանուր նշաններ:

Որակյալ հոդվածի հատկանիշները

Ընդհանուր առմամբ՝ բարձր որակի հոդվածներն ունեն 5 հատկանիշ՝
- ներածություն, որը տալիս է համառոտ, հեշտ հասկանալի ակնարկ,
- պարզ կառուցվածք,
- հավասարակշիռ լուսաբանում,
- չեզոք տեսակետ,
- վստահելի աղբյուրներ:

✓ **Ներածությունը հասկանալի է**. հանրագումարի է բերում հոդվածի հիմնական կետերը: Կենսագրության դեպքում, օրինակ, պետք է նշվի, թե ինչո՞վ է տվյալ անձնավորությունը հայտնի, որտե՞ղ է ապրել, սակայն նրա մանկությունից մանրամասներ ներառելու կարիք չկա, դրանք ավելի նպատակահարմար կլինի տեղադրել հաջորդ բաժնում:

✓ **Կառուցվածքը պարզ է**. կան մի քանի վերնագրեր, ենթավերնագրեր, նկարներ, սխեմաներ՝ հոդվածի համապատասխան մասերում, նաև հավելված և ծանոթագրություն՝ վերջում: Հոդվածների մեծ մասի բովանդակությունը կազմված է ՝ըստ ժամանակագրության:

✓ Հոդվածում թեման բոլոր տեսանկյուններից **հավասարակշիռ լուսաբանում** է ստացել: Ներկայացված են բոլոր կարևոր հանգամանքներն ու փաստերը. որևէ իրադարձություն անհարկի գերիշխող դիրք չի ստացել մյուսների նկատմամբ: Օրինակ՝ եթե կատուների ինչ-որ ցեղատեսակի մասին հոդվածը պարունակում է ծավալուն նկարագրություն կատվի բնավորության ու վարքի մասին, իսկ նրա ֆիզիկական հատկանիշների մասին՝ գրեթե ոչինչ, կարելի է եզրակացնել, որ նյութը հավասարակշիռ լուսաբանված չէ:

✓ Լուսաբանված է **չեզոք տեսանկյունից**. հոդվածը պետք է գրված լինի առանց կողմնակալության: Երբ հոդվածում ներկայացվող թեմայի շուրջ մասնագետները տարաձայնություններ ունեն, առկա տարբեր տեսակետները անհրաժեշտ է հավասարակշռված ներկայացնել: Նյութի դրական և բացասական կողմերը պետք է ներկայացված լինեն նույն համամասնությամբ, ինչ չափով դրանք լուսաբանված են համապատասխան հեղինակավոր աղբյուրներում: Բացի դա՝ լավ հոդվածն ունի չեզոք բառապաշար և շեշտում է

✓ Շատ կարևոր են **վստահելի աղբյուրների** հղումները: Լավ հոդվածներն էջի ներքևի հատվածում ունեն ծանոթագրություններ: Եթե այդտեղ առկա են հեղինակավոր հրապարակումների հղումներ, նշան է, որ բարձր որակի հոդված ենք ընթերցում: Լուսնի մասին հոդվածը պետք է ունենա, օրինակ,

Վատ որակի նշաններ

❌ Հոդվածն ունի **նախազգուշացնող պիտակ** վերևի մասում:
Նախազգուշացնող պիտակները մեծ մասամբ տեղեկացնում են որևէ խնդրի կամ առաջարկի մասին, օրինակ՝ կարճ հոդվածն ընդլայնելու վերաբերյալ: Նախազգուշացնող պիտակները, սակայն, կարող են նաև տեղեկացնել հոդվածի չեզոքության կամ աղբյուրների վստահելիության վերաբերյալ տարաձայնությունների մասին:

❌ Հոդվածի **ներածությունում** որոշ **լեզվական խնդիրներ** կան:
Ներածության մեջ թերությունների առկայությունը սովորաբար նշանակում է, որ խնդիրներ կան ողջ հոդվածում: Շատ կարճ ներածությունը նշան է, որ հոդվածը զարգացել է առանձին մասերով և ընդհանուր փոխկապակցվածությանը բավարար ուշադրություն չի դարձվել:

❌ Հոդվածը պարունակում է **կարծիքներ** և **գնահատականներ**՝ առանց հղումների, որոնք չեզոք չեն և պետք է հեռացվեն: Օրինակ՝ «Նա ամենալավ երգչուհին էր» գրելու փոխարեն, հոդվածում պետք է նշվի «Նա ուներ առաջին հորիզոնականը զբաղեցրած 14 երգեր, ավելի, քան որևէ այլ երգիչ»:

❌ «Հոդվածը վերաբերում է ոմանց, շատերին» . նման **անորոշ բնորոշումները** շատ ընդհանուր են և պետք է փոխարինվեն փաստերով:

❌ Հոդվածում **բացակայում են որոշ կարևոր իրադարձություններ և տեղեկություններ**: Օրինակ՝ եթե ընթերցում ենք կենսագրություն և տեսնում, որ բաց է թողնված կյանքի մի ամբողջ ժամանակահատված, նշանակում է, որ հոդվածում ,հավանաբար, պակասում են կարևոր փաստեր:

❌ Որոշ բաժիններ, թվում է, **չափազանց երկար են՝ իրենց կարևորության հետ համեմատած**: Օրինակ՝ եթե որևէ կազմակերպության մասին հոդվածում առկա է «Քննադատություն» վերնագրով ենթաբաժին, իսկ ընդհանուր բովանդակությունը շատ կարճ է, ապա տպավորություն է ստեղծվում, որ հոդվածն ուղղված է

❌ Հոդվածն ունի շատ **քիչ հղումներ** կամ հոդվածում հիմնականում **բացակայում են ծանոթագրությունները**: Եթե հոդվածը հիմնված է շատ քիչ աղբյուրների վրա, ապա այն, հավանաբար, գրվել է նյութի մասին առանց ամբողջական տեղեկության:

❌ Հոդվածի քննարկման էջը լի է **թշնամական բանավեճերով**: Եթե հոդվածի վրա աշխատող մասնակիցները չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ, ապա հոդվածը կարող է որոշ առումով կողմնակալ լինել կամ կարող է արտահայտել չափից շատ մանրամասներ նյութի վիճարկելի տեսակետների մասին՝ ստվերում

Ի՞նչ անել վատ որակով հոդվածների հետ

Եթե ունես ժամանակ կամ անհրաժեշտ գիտելիք, ապա, խնդրում ենք, ինքդ ուղղումներ կատարիր հոդվածում՝ սեղմելով հոդվածի վերևի Խմբագրել կոճակը:

1) Ստուգիր, թե արդյո՞ք խնդիրը ժամանակավոր է, թե՞ ինչ-որ մեկը փորձում է հեռացնել որևէ բաժին, որը, նրա ընկալմամբ, պատվաբեր չէ իր «հերոսի» համար: Սեղմիր Դիտել պատմությունը կոճակը և տես կատարված վերջին խմբագրումները:

2) Եթե խնդիրը վերջին կատարած խմբագրման մեջ է, ապա կարող ես հետ շրջել և անմիջապես ուղղել սխալը: Եթե խնդիրն առաջացել է վաղուց, կամ եթե չունես գիտելիք՝ այն ուղղելու, ապա մեկնաբանություն թող Քննարկում բաժնում՝ նկարագրելով խնդիրը:

3) Եթե խնդիրը լուրջ է, ինչպես, օրինակ, զրպարտական հայտարարությունները որևէ ողջ անձի հասցեին, ապա ազատ զգա և անմիջապես հեռացրու այն: Հաշվի առ, որ դու ինքդ էլ կարող ես կողմանակալ լինել, հատկապես, երբ խմբագրում ես քո երկրի կամ քո կազմակերպության մասին հոդվածը: Հոդվածի «Քննադատություն» բաժինը նպատակահարմար է միայն, եթե այն ամբողջովին հիմնված է վստահելի և հեղինակավոր աղբյուրների վրա: Հոդվածից որևէ բան հեռացնելիս կարելի է այդ մասին բացատրություն տեղադրել Քննարկում բաժնում:

Եթե ուզում ես ավելի շատ խորհուրդներ ստանալ՝վատ որակով հոդվածը փոփոխելու համար, կարող ես Վիքիպեդիայի որոնման վանդակում մուտքագրել Վիքիպեդիա:Որակյալ հոդված բառերը և որոնել:

Կարելի՞ է արդյոք վստահելի համարել Վիքիպեդիան

Վստահելիությունը կարևոր է:

Շատերի համար Վիքիպեդիայից օգտվելը դարձել է ստանդարտ, բայց ինչպե՞ս կարող ես համոզվել, որ ստացել ես արժանահավատ տեղեկություն:

«Գնահատենք Վիքիպեդիան: Հետևել զարգացմանը և գնահատել հոդվածի որակը» ուղեցույցը քայլ առ քայլ ցույց է տալիս, թե ինչպես կարելի է Վիքիպեդիայից ստանալ առավելագույնը:

Գրքույկի էլեկտրոնային տարբերակը.
http//commons.wikimedia.org/որակի_գնահատում.pdf

Այցելեք նաև.
www.wikimedia.am

All images from Wikimedia Commons are under a CC BY-SA license or public domain unless otherwise stated. The content contained within is available under the Creative Commons Attribution-ShareAlike License v.3.0 (http://en.wikipedia.org/wiki/Wikipedia:CC-BY-SA) or any later version.

The trademarks and logos of the Wikimedia Foundation and any other organization are not included under the terms of this Creative Commons license. Wikimedia Foundation, Wikipedia, Commons, MediaWiki, Wiktionary, Wikibooks, Wikidata, Wikisource, Wikinews, Wikiquote, Wikiversity, Wikivoyage, Wikispecies, and Meta-Wiki are pending trademark registration or are registered trademarks of Wikimedia Foundation.

For more information, please see our Trademark Policy page, http://wikimediafoundation.org/wiki/Trademark_Policy.

For other questions about our licensing terms or trademark policy, please email legal@wikimedia.org

10% post-consumer recycled fiber, elemental chlorine-free process, produced using renewable power